

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012076329, 2012075836 և 2012076437 որոշումները բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի վարույթը կարճելու մասին

<< 11 >> 02 2021թ. 7-13- 199

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Ռազմիկ Խաչատուրեանի ներկայացուցիչ՝ Հայկուշ Ղազարի ՄԴ/6245-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Քաղաքացի Ռազմիկ Խաչատուրեանի ներկայացուցիչ՝ Հայկուշ Ղազարը (ծանուցման հասցե՝ ք.Երևան Մաշտոցի պողոտա 15 շենք 4 բնակարան) դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012076329, 2012075836 և 2012076437 որոշումները՝ նշելով, որ իրավախախտումները կատարվել են ծայրահեղ անհրաժեշտության վիճակում՝ Ռազմիկ Խաչատուրեանը երեխային է տեղափոխել հիվանդանոց: Դիմումին կից ներկայացրել է <<Սուրբ Աստվածամայր>> բժշկական կենտրոնի կողմից տրված 19.01.2021թ. թիվ 14 տեղեկանքը և հիվանդների ընդունման գրանցամատյանի լուսապատճենը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012076329, 2012075836 և 2012076437 որոշումներն ենթակա են բեկանման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով,

տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածով վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը թեև սույն օրենսգրքով կամ վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող այլ նորմատիվ ակտերով նախատեսված գործողություն է կատարել, սակայն գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնացել է պետական կամ հասարակական կարգին, սոցիալիստական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին, կառավարման սահմանված կարգին, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարելի վերացնել այլ միջոցներով և եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարևորություն ունի:

Դիմումատուի կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն՝ 08.12.2020թ-ին ժամը՝ 17:20-ին հարազատների ուղեկցությամբ 001RX01 հաշվառման համարանիշի ավտոմոբիլով «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն է ընդունվել՝ Կլարա Ռազմիկի Խաչատուրեանը՝ (ծնված՝ 25.09.2019թ.) կգակի պատոված վերք ախտորոշմամբ: Կատարվել է առաջնային վիրաբուժական մշակում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և սոցիալիստական իրավագիտակցությամբ:

Այսպիսով, վարչական վարույթի ընթացքում հիմնավորվել է ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

- 1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012076329, 2012075836 և 2012076437 որոշումները բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի վարույթը կարճել:
- 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
- 3. Սույն որոշման օրինակն ուղարկել Հայկուշ Ղազարին:

Կատարող Ռ.Ավետիսյան
Հեռ.՝ 060838402

